

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին

Սույն Արձանագրության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր, գիտակցելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների (այսուհետ՝ թմրանյութեր), հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի (այսուհետ՝ զենք) անօրինական շրջանառությունը լուրջ վտանգ է ներկայացնում Կողմերի ազգային անվտանգությանը, իրենց ժողովուրդների առողջությանն ու բարեկեցությանը,

հաշվի առնելով 1961 թվականի՝ Թմրամիջոցների մասին միասնական կոնվենցիան՝ 1972 թվականի Արձանագրությանը համապատասխան դրանում արված ուղղումներով, 1971 թվականի փետրվարի 21-ի՝ Հոգեմետ նյութերի մասին կոնվենցիան, 1988 թվականի դեկտեմբերի 20-ի՝ Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան, 2000 թ. նոյեմբերի 30-ի՝ «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և բաղադրիչների անօրինական շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» Համաձայնագիրը, 2000 թվականի նոյեմբերի 15-ի՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ վերազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան, ինչպես նաև 1993 թվականի հունվարի 22-ի՝ Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիան և 2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիան,

նպատակ ունենալով խորացնելու համագործակցությունը թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման և քննության գործում,

ընդունելով, որ թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության հետ կապված քրեական գործերով Կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը կնպաստի այդպիսի հանցագործությունների նախազգուշացմանը և դրանց դեմ պայքարին,

նպատակ ունենալով սահմանելու քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրանյութերի և զենքի փոխանցման կարգ,

ղեկավարվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով և նորմերով,

պայմանավորվեցին ներքոնշյալ մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրության մեջ կիրառվում են հետևյալ տերմինները.

իրեղեն ապացույցներ՝ քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցներ և դրանց բաղադրիչներ, հրազեն, դրա հիմնական մասեր, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր և պայթուցիկ սարքեր,

հարցում՝ խնդրանք (միջնորդություն) քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրանյութերի և զենքի փոխանցման մասին,

Կողմերի իրավասու մարմիններ՝ Կողմերի պետական մարմիններ, որոնք իրենց իրավասության շրջանակներում, Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան, իրականացնում են սույն Արձանագրության իրագործման իրենց լիազորությունները:

Հոդված 2

Սույն Արձանագրության շրջանակներում Կողմերը համագործակցում են իրեղեն ապացույցների փոխանցման հարցերում:

Հոդված 3

1. Սույն Արձանագրության շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների հարցումների հիման վրա:

2. Կողմերի իրավասու մարմիններն ուղարկում, ստանում են հարցումներ, կազմակերպում են դրանց օպերատիվ և պատշաճ կատարումը:

Հոդված 4

1. Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով կատարվող հարցումով պարտավորվում են միմյանց փոխանցել իրեղեն ապացույցներ՝ հարցում ուղարկող Կողմի քրեական դատավարության ընթացքում օգտագործելու համար:

2. Հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինների հարցմամբ՝ հարցում ստացող Կողմի իրավասու մարմինների կողմից իրեղեն ապացույցների փոխանցումը կարող է հետաձգվել մինչև հարցում ստացող Կողմի քրեական գործով վարույթի դադարեցումը կամ դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Հոդված 5

1. Իրավասու մարմինների ցանկը սահմանում է յուրաքանչյուր Կողմ և փոխանցում ավանդապահին սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցումն ի պահ հանձնելիս:

2. Իրավասու մարմինների ցանկում փոփոխությունների մասին յուրաքանչյուր Կողմ 30 օրվա ընթացքում գրավոր ծանուցում է ավանդապահին:

Հոդված 6

Սույն Արձանագրության շրջանակներում հարցում ստացող Կողմի իրավասու մարմինների ստացած իրեղեն ապացույցներն ունեն այնպիսի իրավաբանական ուժ, որը կունենային, եթե ստացված լինեին հարցում կատարող Կողմի տարածքում՝ նրա ազգային օրենսդրության պահանջներին համապատասխան:

Հոդված 7

1. Հարցման կատարումը կարող է ամբողջությամբ կամ մասամբ մերժվել, եթե հարցում ստացող Կողմը ենթադրում է, որ դրա կատարումը կարող է վնաս հասցնել իր պետական շահերին կամ հակասում է իր ազգային օրենսդրությանը:

2. Հարցման կատարումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինն այդ մասին գրավոր իրազեկվում է՝ պատճառի նշումով, հարցման ստացումից ոչ ուշ, քան 30 օր :

Հոդված 8

1. Իրեղեն ապացույցների փոխանցման մասին հարցումը կազմվում է գրավոր, ստորագրվում է այն ուղարկող անձի կողմից, վավերացվում է համապատասխան մարմնի՝ զինանշանի պատկերն ունեցող կնիքով: Հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) հարցումն ուղարկող Կողմի իրավասու մարմնի անվանումը և գտնվելու վայրը,

բ) այն Կողմի իրավասու մարմնի անվանումը և գտնվելու վայրը, որին ուղարկվում է հարցումը,

գ) քրեական գործի համարը և հարցման բնույթը,

դ) տվյալներ կասկածյալների կամ մեղադրյալների մասին, ներառյալ

տվյալները

նրանց ծննդյան ամսաթվի և ծննդավայրի, քաղաքացիության, գործունեության, բնակության կամ գտնվելու վայրի մասին, իրավաբանական անձանց համար՝ դրանց անվանումն ու գտնվելու վայրը,

ե) կատարված հանցագործության փաստացի հանգամանքների, հարցում ուղարկող Կողմի օրենսդրության համաձայն դրա որակման մասին տեղեկություններ և օրենքի կիրառվող դրույթի տեքստը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տվյալ հանցագործությամբ պատճառված վնասի չափի և հարցումը կատարելու ցանկալի ժամկետի մասին տեղեկություններ,

զ) փոխանցման համար հարցվող իրեղեն ապացույցների ցանկը և նկարագրությունը, հանցագործության քննության ընթացքում դրանց ապացուցողական նշանակությունը,

է) տեղեկություններ իրավասու մարմինների այն ներկայացուցիչների մասին, որոնց պետք է փոխանցել իրեղեն ապացույցները. նրանց անունները (հայրանունները), ազգանունները, պաշտոնները:

2. Եթե հարցում ստացող Կողմը գտնում է. որ հարցման մեջ նշված տվյալները բավարար չեն դրա կատարման համար, նա կարող է հայցել լրացուցիչ տեղեկություններ:

3. Հարցման կատարման արդյունքների մասին հարցում ուղարկող Կողմն իրազեկվում է գրավոր:

4. Անհետաձգելի դեպքերում հարցումը կարող է ուղարկվել ֆաքսիմիլային կապի միջոցով, ինչպես նաև հաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ: Միաժամանակ հարցման բնօրինակը պետք է ուղարկվի փոստով կամ սուրհանդակի միջոցով:

Իրեղեն ապացույցների անմիջական փոխանցումը կատարվում է հարցման բնօրինակը ստանալուց հետո:

5. Հարցման մեջ նշված ժամկետում հարցման կատարմանը խոչընդոտող կամ կատարումը հետաձգող հանգամանքների մասին հարցում ստացող Կողմի իրավասու մարմինն անհապաղ իրազեկում է հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնին:

6. Եթե հարցման կատարումը չի մտնում հարցումն ստացող մարմնի իրավասության մեջ, նա հարցումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է իր պետության այն մարմնին, որն իրավասու է այն կատարելու, և այդ մասին անհապաղ իրազեկում է հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմնին:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է տեղեկույթի գաղտնիությունը և իրեղեն ապացույցների անվտանգությունը, որոնք փոխանցվում են հարցումն իրականացնելու ընթացքում: Իրեղեն ապացույցներին հասանելիության սահմանափակման աստիճանը որոշում է հարցում ուղարկող Կողմը:

2. Սույն Արձանագրության հիման վրա ստացված տեղեկությունները և իրեղեն ապացույցները առանց դրանք տրամադրած Կողմի գրավոր համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով՝ բացի այն նպատակներից, որոնց համար դրանք հարցվել և տրամադրվել են:

3. Սույն Արձանագրության հիման վրա մի Կողմի՝ մյուս Կողմին փոխանցված տեղեկություններն ու իրեղեն ապացույցները ենթակա չեն երրորդ կողմի փոխանցման՝ առանց դրանք տրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության:

4. Ստացած տեղեկության և իրեղեն ապացույցների անվտանգության պաշտպանության վերաբերյալ Կողմերի ստանձնած պարտավորություններն ուժի մեջ են մնում նաև սույն Արձանագրության գործողության դադարեցումից կամ դրանից դուրս գալուց հետո:

Հոդված 10

1. Հարցում ստացող Կողմի իրավասու մարմինը հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմիններին իրեղեն ապացույցները փոխանցելու վերաբերյալ որոշում կայացնելիս նախօրոք իրազեկում է հարցում ուղարկող Կողմին փոխանցման ժամանակի և տեղի մասին:

2. Իրեղեն ապացույցների փոխանցումը կատարվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ սույն Արձանագրությանը կից 1-ին Հավելվածով սահմանված կարգի համաձայն:

3. Իրեղեն ապացույցների ընդունում-հանձնումը ձևակերպվում է արձանագրությամբ՝ Արձանագրությանը կից 2-րդ Հավելվածի համաձայն:

4. Փոխանցման ժամանակ իրեղեն ապացույցները պետք է փաթեթավորել պատշաճորեն՝ ապահովելով դրանց անվնաս և անվտանգ տեղափոխումը՝ հարցում ստացող Կողմի ազգային օրենսդրության համաձայն:

Հոդված 11

1. Կողմերի պետական (մաքսային) սահմաններով, ինչպես նաև

Կողմերի տարածքներով տարանցման ժամանակ իրեղեն ապացույցների տեղափոխումը կատարվում է առաջնահերթ կարգով: Ընդ որում՝ որպես մաքսային հայտարարագիր կարող են օգտագործվել տրանսպորտային (տեղափոխման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը մաքսային մարմիններին՝ Արձանագրությանը կից 3-րդ Հավելվածի համաձայն ձևակերպված, իրեղեն ապացույցի հաշվառման քարտ ներկայացնելու պայմանով:

2. Իրավասու մարմինների հսկողության ներքո, համաձայն ազգային օրենսդրության, Կողմերից յուրաքանչյուրը կարող է միջոցներ ձեռնարկել իրեղեն ապացույցների տեղափոխումը պարզեցնելու համար:

Հոդված 12

1. Եթե իրեղեն ապացույցների փոխանցումը շոշափում է հարցում ստացող Կողմի և/կամ երրորդ կողմի շահերը, ապա փոխանցումը կատարվում է միայն հարցում ուղարկող Կողմում քրեական գործով վարույթի ավարտից հետո՝ իրեղեն ապացույցները

վերադարձնելու մասին հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինների պարտավորության դեպքում:

2. Հարցում ուղարկող իրավասու մարմնի կողմից իրեղեն ապացույցները վերադարձվում են քրեական գործի վարույթի ավարտից հետո՝ սույն Արձանագրության 10-րդ և 11-րդ հոդվածներում շարադրված կարգին համարժեք:

Հոդված 13

1. Սույն Արձանագրության կատարման ընթացքում Կողմերը ծախսերը կատարում են ինքնուրույն, եթե ամեն կոնկրետ դեպքի համար այլ կարգ չի համաձայնեցվում:

2. Անհրաժեշտության դեպքում, սույն Արձանագրության կատարման նպատակով, Կողմերը կարող են միմյանց ցուցաբերել անհատույց օգնություն:

Հոդված 14

Սույն Արձանագրությունը չի շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքներն ու պարտավորությունները, որոնց մասնակից են նրանք:

Հոդված 15

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի

մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

2. Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Հոդված 16

1. Սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո միանալու համար բաց է ԱՊՀ մասնակից ցանկացած պետության համար. միանալ կարելի է փաստաթղթերն ավանդապահին փոխանցելու միջոցով:

2. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին համապատասխան փաստաթուղթն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

3. Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից չհանդիսացող պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած բոլոր պետությունների կողմից միանալու վերաբերյալ համաձայնության մասին վերջին ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Հոդված 17

Կողմերի համաձայնությամբ սույն Արձանագրության մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 18

Սույն Արձանագրության կիրառման և մեկնաբանման ժամանակ Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև՝ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 19

Սույն Արձանագրության շրջանակներում համագործակցություն իրականացնելիս Կողմերը կիրառում են ռուսերենը:

Հոդված 20

Սույն Արձանագրությունը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից

յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Արձանագրությունից ոչ պակաս, քան 6 ամիս առաջ դուրս գալու իր մտադրության մասին գրավոր ծանուցելով ավանդապահին և կարգավորելով Արձանագրության գործողության ընթացքում ծագած ֆինանսական կամ այլ պարտավորությունները:

Կատարված է Սոչի քաղաքում 2017 թվականի հոկտեմբերի 11-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որն էլ սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուլարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության
Կառավարության կողմից
(վերապահումով)
/ստորագրություն/**

**Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից
(վերապահումով)
/ստորագրություն/**

**Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Թուրքմենստանի Կառավարության
կողմից
-----**

**Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Ուզբեկստանի Հանրապետության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Ղրղզստանի Հանրապետության
Կառավարության կողմից
/ստորագրություն/**

**Ուկրաինայի Կառավարության կողմից
-----**

**Մոլդովայի Հանրապետության
Կառավարության կողմից
-----**

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» 2017 թվականի հոկտեմբերի 11-ի Արձանագրությանը կից

Կ Ա Ր Գ

Իրեղեն ապացույցների փոխանցման

1. Իրեղեն ապացույցների փոխանցումը կատարվում է Կողմերի իրավասու մարմինների ներկայացուցիչների հարցման հիման վրա:

2. Իրեղեն ապացույցների տեղափոխումը սույն Արձանագրության մասնակից պետությունների տարածքներով կատարվում է Կողմերի իրավասու մարմինների հսկողության ներքո՝ նրանց ազգային օրենսդրության համաձայն:

Այդ նպատակով Կողմերի իրավասու մարմինները համաձայնեցնում են իրեղեն ապացույցների ընդունման-հանձնման ամսաթիվը, իրեղեն ապացույցների առաքումը կատարող անձանց ցուցակը, Կողմերի պետական (մաքսային) սահմանային անցակետերը, շարժման երթուղիները, տրանսպորտը և այլ անհրաժեշտ հարցեր:

3. Իրեղեն ապացույցները պարտադիր փաթեթավորվում են, փակցվում է պիտակ՝ 4-րդ Հավելվածով սահմանված ձևի համաձայն, և տեղափոխման համար տեղադրվում են առանձին կամ խմբային փաթեթում: Փաթեթներից յուրաքանչյուրը կնքվում է հարցում ստացող Կողմի (ուղարկողի) իրավասու մարմնի կնիքով: Ընդ որում՝ փաթեթը պետք է ապահովի արտաքին ազդեցություններից պաշտպանությունը:

4. Իրեղեն ապացույցների մասին տեղեկությունները նշվում են իրեղեն ապացույցների հաշվառման քարտում՝ համաձայն 3-րդ Հավելվածով սահմանված ձևի:

5. Ուղեկցող փաստաթղթերը ներառում են իրեղեն ապացույցների ցանկը՝ նշելով դրանց փաթեթավորման անհատական համարները և փաթեթավորման ամսաթվերը, իրեղեն ապացույցների արտաքին տեսքի և փաթեթի մասին տեղեկությունները, պիտակի վրայի դրոշմակնիքի տեսքերը:

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» 2017 թվականի հոկտեմբերի 11-ի Արձանագրությանը կից

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
իրեղեն ապացույցների ընդունման-հանձնման

_____ 20____ թ.

(արձանագրությունը կազմելու վայրը)

-----ժամ_____ րոպե

Հարցում ուղարկող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչներ

(փոխանցմանը մասնակցող անձանց պաշտոնները, ազգանունները և անվանատառերը)

Հարցում ստացող Կողմի իրավասու մարմինների ներկայացուցիչներ

(փոխանցմանը մասնակցող անձանց պաշտոնները, ազգանունները և անվանատառերը)

Փոխանցվող

իրեղեն

ապացույցներ

(նկարագրություն. բացատրական մակագրությամբ փաթեթ՝ վավերացված իրավասու մարմինների ներկայացուցիչների ստորագրություններով ամրագրված՝ զինանշանով դրոշմակնիքով քանակը, քաշը, փոխանցվող իրերեն ապացույցների անհատական հատկանիշների)

**Հարցում ուղարկող Կողմի իրավասու
մարմինների ներկայացուցիչների
ստորագրությունները**

**Հարցում ստացող Կողմի իրավասու
մարմինների ներկայացուցիչների
ստորագրությունները**

(ստորագրություն) (ազգանուն և անվանատառեր)

(ստորագրություն) (ազգանուն և անվանատառեր)

(ստորագրություն) (ազգանուն և անվանատառեր)

(ստորագրություն) (ազգանուն և անվանատառեր)

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» 2017 թվականի հոկտեմբերի 11-ի Արձանագրությանը կից

Իրեղեն ապացույցի հաշվառման քարտ

1. Վավերատարրեր	
1.1. Հաշվառման №.	20 թ.
1.2. Գերատեսչություն, պաշտոն, քարտը կազմողի Ա.	
1.3. Փաթեթավորման ամսաթիվը	
2. Իրեղեն ապացույցի մասին տեղեկություններ	
2.1. Անվանում	
2.2. Զանգված/քաշ/իրեղեն ապացույցի քանակը	
2.3. Բացելու ամսաթիվը	
2.4. Բացելու տեղը	
2.5. Բացող գերատեսչությանը	
2.6. Փաթեթի ձևը և չափսը Լիազորված անձի ստորագրությունը	

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» 2017 թվականի հոկտեմբերի 11-ի Արձանագրությանը կից

Իրեղեն ապացույցի պիտակ

Իրեղեն ապացույցի համարը _____
(անհատական համար)

Փաթեթավորման ամսաթիվը _____ Բացելու ամսաթիվը _____

Բացելու վայրը _____

Փաթեթավորեց _____ ԿՏ

_____ (փաթեթի կնքման ժամանակ օգտագործվող դրոշմակնիք)

Ա. Ա. Հ.

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վերաբերյալ

Ադրբեջանի Հանրապետության կողմից Արձանագրության մեջ շարադրված ոչ մի իրավունք, պարտավորություն և դրույթ Հայաստանի Հանրապետության նկատմամբ չի կիրառվի մինչև Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի Հանրապետության գրավյալ բոլոր տարածքների ազատումը և ագրեսիայի հետևանքների լրիվ վերացումը:

**Ադրբեջանի Հանրապետության
նախագահ՝**

Իլհամ Ալիև

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վերաբերյալ

Ադրբեջանի Հանրապետության կողմից «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» 2017 թվականի հոկտեմբերի 11-ի Արձանագրության վերաբերյալ վերապահումը ներկայացնելու կապակցությամբ նշված Արձանագրության ոչ մի իրավունք, պարտավորություն և դրույթ Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ չեն կիրառվի մինչև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը, որը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ Ադրբեջանի Հանրապետության իրականացրած էթնիկ զտումների քաղաքականության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի արդյունք է:

**Հայաստանի Հանրապետության
նախագահ՝**

Ս.Ա.Սարգսյան

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2017թ. հոկտեմբերի 11-ին ստորագրված «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն